Հաշվետվություն

Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում կայացած <<Օազիսային գյուղատնտեսության և ոռոգման ջրախնայողության տեխնոլոգիայի զարգացումը <<Մետաքսի ճանապարհի>> երկայնքով ընկած ռուսալեզու երկրներում>> խորագրով դասընթացի վերաբերյալ
06.09.2018-26.09.2018

Ջրային կոմիտեի մասնագետները Չինաստանի Ժողովրդական Հանրապետության առևտրի նախարարության Սինցզյան-ույղուրական ինքնավար շրջանի (ՍՈՒԻՇ) առևտրային համագործակցության և գիտատեխնիկական փոխանակման կենտրոնի հրավերով մասնակցել են սեպտեմբերի 6-ից 26-ը ՉԺՀ կառավարության կողմից կազմակերպված <<Օազիսային գյուղատնտեսության և ոռոգման ջրախնայողության տեխնոլոգիայի զարգացումը <<Մետաքսի ճանապարհի>> երկայնքով ընկած ռուսալեզու երկրներում>> խորագրով դասընթացին:

Դասընթացի նպատակն էր Մետաքսի ճանապարհին ընկած երկրների, Կենտրոնական, Միջին, Արևմտյան Ասիայի և այլ երկրներում զարգացնել գյուղատնտեսության և ոռոգման ջրախնայողության տեխնոլոգիաները, ինչպես նաև ամրապնդել բարեկամությունն ու համագործակցությունը ՉԺՀ-ի և այդ երկրների միջև:

Դասընթացներն իրականացվել են տեսական և գործնական ձևաչափով: Դասախոսությունների հիմնական թեմաները վերաբերել են Սինցզյանի գյուղացիական տնտեսություններում ոռոգման ջրախնայող նորարարական տեխնոլոգիաներին, պարարտացված ոռոգմանը:

Դասընթացի շրջանակներում կատարվել են մի շարք ուսումնական այցեր՝ բանջարանոցներ, խաղողի և մրգատու այգիներ, բանջարաբոստանային մշակաբույսերի ջերմոցներ, փորձարարական տնտեսություններ, արդի տեխնոլոգիաներով հագեցած պոմպակայաններ, գիտահետազոտական ինստիտուտներ:

Դրանցից կարելի է առանձնացնել Դա Ֆեն և Խու Տու Բի գյուղերում տեղակայված գյուղատնտեսական բարձր տեխնոլոգիաների ազգային համալիրները, որտեղ ոռոգումն իրականացվում է կաթիլային ու անձրևացման ավտոմատ համակարգերի միջոցով: Այստեղ ներդրված են հեռակառավարման համակարգեր, որոնցով իրականացվում է հիդրոհանգույցների ավտոմատ կառավարումը, ջրի հաշվառումը, տեխնիկական խնդիրների, վթարների արձանագրումը և այլն: Հեռակառավարման կենտրոններում համակարգի կառավարումն իրականացվում է մեկ աշխատակցի կողմից:

Դասընթացի մասնակիցներն այցելել են նաև Ուռումչի քաղաքում գտնվող բարձր տեխնոլոգիաների կենտրոնում տեղակայված հիդրոպոնիկայի կենտրոն, որտեղ ծանոթացել են մշակաբույսերի անհող աճեցման տեխնոլոգիաներին: Մասնակցել են մի շարք փորձնական աշխատանքների:

Դասընթացի ավարտին մասնակիցները այցելել են ՉԺՀ-ի Ցինդաո և Դալյան քաղաքներ, որտեղ ծանոթացել են չինական մշակույթին: Այցելել են մի շարք գյուղատնտեսական ցուցահանդեսներ, թանգարաններ և պատմամշակույթային համալիրներ:

水磨沟风景区